

Մամլոյ Հաղորդագրութիւն

Դադրեցուցէ՛ք Յարձակումը Պաղեստինի Ժողովուրդին Դէմ:

Ժողովրդավարական Փոփոխութեան Ուժերու Ազգային Համակարգող Մարմին

Մամլոյ Հաղորդագրութիւն

Պաղեստինեան ազգային համաձայնական կառավարութիւնը կազմաւորումէն ետք, Սիոնական գոյացութեան բանակի կատարած վայրագ ոճրագործութիւնները սաստկացան Պաղեստինի ժողովուրդին դէմ Արեւմտեան Ափին մէջ, առեւանգուած երեք բնակեցուածներու սպանութեան պատրուակով, որուն իրագործողը չի ճանչցուեցաւ: Այս ոճրագործութիւններուն հասոյթն էր՝ գործիչներու ձերբակալման ու սպանութեան գործողութիւններ, տուներու կործանում և բնակեցուածներու կողմէ Մուհամետ Ապու Խըսէր մանչին առեւանգելը, խոշտանգելն ու այրելը ողջօրէն (Հոլոքոսթի) կերպով, որմով Սիոնական գոյացութիւնը շանդաժի կ'ենթարկէ աշխարհը:

Աւելի քան մէկ շաբաթ է ի վեր, Սիոնական գոյացութիւնը ծովային ու օդային շղթայազերծած յարձակում կը ձեռնարկէ Պաղեստինի ժողովուրդին դէմ Կազայի մէջ, վայրագ կոտորածներ ու ցեղասպանութեան պատերազմ կը կատարէ ամբողջական ընտանիքներու հանդէպ, տուներու ու թաղամասերու կործանում քաղաքայիններուն վրայ, և կը սպառնայ ցամաքային պատերազմ ձեռնարկելու Արաբական Լիկայի լռութեան, միջազգային հասարակութեան դաւադրութեան և Ամերիկեան խափանումի՝ զինադադարի բանաձեւ հրապարակման Ապահովութեան խորհուրդին կողմէ, շուքին տակ:

Գործադիրի գրասենեակը կը դատապարտէ Սիոնական թշնամիին կատարած ոճրագործութիւնները Պաղեստինի ժողովուրդին հանդէպ Կազայի և Արեւմտեան Ափին մէջ, և կը պահանջէ յարիլ Ափին և Կազայի միասնականութեան ու համաձայնական կառավարութեան, դադրեցնել ամէն տեսակի վերաբերումը թշնամիին հետ, վերջ դնել Արաբական նախաձեռնութեան, գործունեայ դեր Արաբական Եգիպտոսի Հանրապետութեան՝ միասնական Արաբական դիրքորոշումի շրջանակի ներքեւ և Համա-Արաբական աշխատանք դադրեցնելու յարձակումը

Պաղեստինի ժողովուրդին դեմ, Ռաֆահի անցքին բանալը մշտապես, նիթական ու քաղաքական աջակցություն ապահովել այս ազնիւ ժողովուրդին մինչեւ որ ազատագրուի ցեղապաշտ բնակեցման գրաւումէն:

Ողորմութիւն Պաղեստինի ժողովուրդի նահատակներուն, ապաքինում վիրաւորներուն և ազատութիւն անսասան գերիներուն:

Դամասկոս, 12/7/2014

14 Ըամատան 1435

Գործադիրի գրասենեակ

